ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
18 մարտի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 58 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը և Լևոն Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Աշոտ Շահբազյանը և Սոնա Թևանյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, կոմունալ տնտեսության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Կամո Բաղանյանը, տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի պաշտոնակատար Սևակ Մելքոնյանը, քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետ Ալիկ Վարդազարյանը, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանը և Նախաձեռնող խմբի ներկայացուցիչ Անդրանիկ Թևանյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2025 թվականի ապրիլի 22-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 27 հարց, որից՝ 2-23-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
3. Նունե Թումանյանի հեղինակած «Երեք խնձոր» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
4. Արմենուհի Հովսեփյանի «Կատարսիս» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
5. Խորեն Պալյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
6. Կարինե Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
7. Գրիգոր Գուրզադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի Նաիրի Զարյան փողոցը Կոստան Զարյանի անվամբ անվանափոխելու մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
11. Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)
12. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Չզեկուցվող)
13. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
14. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
15. Գույքի նվիրատվության մասին: (Չզեկուցվող)
16. Գույքի նվիրատվության մասին: (Չզեկուցվող)
17. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին: (Չզեկուցվող)
18. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց թիվ 8, Հանրապետության փողոց թիվ 83, 83/2, 85 և Սայաթ-Նովա պողոտա թիվ 20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
19. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հնդկաստանի փողոց հ.2 հասցեում բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

20. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 267-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
21. Աղբահանության վճարի նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին: (Զեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N266-Ն և 267-Ն որոշումների մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
23. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 690-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
24. Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին: (Զեկուցվող)
25. Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
26. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
27. Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին: (Զեկուցվող)

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ օրակարգի չզեկուցվող՝ 4-րդ «Արմենուհի Հովսեփյանի «Կատարսիս» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին», 8-րդ՝ «Երևան քաղաքի Նաիրի Զարյան փողոցը Կոստան Զարյանի անվամբ անվանափոխելու մասին» և 20-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 267-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հարցերը հանում է օրակարգի նախագծից:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ օրակարգի չզեկուցվող՝ 17-րդ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հնդկաստանի փողոց հ.2 հասցեում բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցի վերաբերյալ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Օրակարգի զեկուցվող 24-րդ՝ «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցի վերաբերյալ գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց օրակարգի զեկուցվող՝ 27-րդ՝ «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը քննարկել որպես օրակարգի զեկուցվող 24-րդ հարց:

Առաջարկը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 23, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 5

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
3. Նունե Թումանյանի հեղինակած «Երեք խնձոր» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
4. Խորեն Պալյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
5. Կարինե Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
6. Գրիգոր Գուրզադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
7. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
8. Երևան համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: (Զեկուցվող)
9. Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
10. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)
11. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
12. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
13. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)
14. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)
15. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին: (Զեկուցվող)

16. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց թիվ 8, Հանրապետության փողոց թիվ 83, 83/2, 85 և Սայաթ-Նովա պողոտա թիվ 20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
17. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հնդկաստանի փողոց հ.2 հասցեում բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
18. Աղբահանության վճարի նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին: (Չզեկուցվող)
19. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N266-Ն և 267-Ն որոշումների մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 690-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
21. Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին: (Զեկուցվող)
22. Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
23. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 11

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 20-րդ հարցերը:

Տ. Ավինյանը ներկայացրեց չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրված եզրակացությունները:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

3. Նունե Թումանյանի հեղինակած «Երեք խնձոր» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն քանդակագործ, Հայաստանի Հանրապետության նկարիչների միության անդամ Նունե Թումանյանի հեղինակած «Երեք խնձոր» քանդակը Երևան քաղաքի Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հարակից տարածքում տեղադրելու համար՝ համաձայն հավելվածի:

4. Խորեն Պալյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Տալ համաձայնություն հայ հոգևոր երգիչ, մանկավարժ, շարականագետ, ծիսագետ, բանասեր Խորեն Պալյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եզ. Կողբացու փողոցի հ.42/3 հասցեում փակցնելու համար:

5. Կարինե Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Տալ համաձայնություն կոնսերվատորիայի պրոֆեսոր Կարինե Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.33 հասցեում փակցնելու համար:

6. Գրիգոր Գուրզադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն նշանավոր աստղաֆիզիկոս, խորհրդային աստղագիտության հիմնադիր Գրիգոր Գուրզադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.33 հասցեում փակցնելու համար:

7. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N259-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլուխի աղյուսակը լրացնել նոր՝ 14-րդ, 15-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

8. Երևան համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

9. Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Գ. Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 4.5658 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխությունը 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

10. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (թվով 505 վերելակներ), ընդհանուր 4.617.375.960 (չորս միլիարդ վեց հարյուր տասնյոթ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր վաթսուն դրամ) ՀՀ դրամ արժեքով, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին՝ ի դեմս շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումն իրականացնող կառավարման մարմինների՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել սույն որոշման հավելվածում նշված բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ նվիրատվության պայմանագրերի և վերելակների հանձնման-ընդունման ակտերի կնքումը:

3.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման հավելվածում նշված բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինները պարտավոր են անհատույց սեփականության իրավունքով փոխանցված վերելակների ընթացիկ սպասարկումն իրականացնել նվիրատվության պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան:

11. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2025 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

12. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ սույն որոշման հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

13. Գույքի նվիրատվության մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2022 և 2023 թվականների բյուջեների «Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում» ծրագրով ձեռք բերված, 87,548,991.01 (ութսունյոթ միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար ինը հարյուր իննսունմեկ հազար դրամ մեկ լումա) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 64 հատ կանգառասրահները սեփականության իրավունքով օտարել (նվիրել) «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

14. Գույքի նվիրատվության մասին:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի 2022 թվականի բյուջեի «Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում» ծրագրով ձեռք բերված, 59,349,999.88 (հիսունիննը միլիոն երեք հարյուր քառասունիննը հազար իննը հարյուր ինսունիննը հազար դրամ ութսունութ լումա) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 33 հատ կանգառասրահները սեփականության իրավունքով օտարել (նվիրել) «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

15. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ համաձայն հավելվածի:

16. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց թիվ 8, Հանրապետության փողոց թիվ 83, 83/2, 85 և Սայաթ-Նովա պողոտա թիվ 20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց թիվ 8, Հանրապետության փողոց թիվ 83, 83/2, 85 և Սայաթ-Նովա պողոտա թիվ 20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N04-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում» Հայաստանի հանրապետության շինարարական նորմեր» 241-րդ կետի համաձայն՝ տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ պետք է լինի 40%-ից ոչ պակաս, իսկ բնակելի (բնակեցման) տարածքի սահմաններում՝ 25%-ից ոչ պակաս: Համաձայն 2025 թվականի փետրվարի 19-ին Երևան քաղաքի Վահան Տերյան փողոց թիվ 44 հասցեում ժամը 11:00-ին կայացած առաջին հանրային լսման ժամանակ «Պրեմիում պլազա» ՓԲ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց թիվ 8, Հանրապետության փողոց թիվ 83, 83/2, 85 և Սայաթ-Նովա պողոտա թիվ 20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծի՝ հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 5388.4մ^2, կանաչապատման մակերեսը կազմում է 2162մ^2: Սակայն նախագծում կանաչապատման համար նախատեսված 2162մ^2 (40%) մակերեսն ընդգրկում է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքները և սեփականության իրավունքով «Պրեմիում պլազա» ՓԲ ընկերությանը պատկանող հողատարածքում՝ չապահովելով սեփական տարածքում կանաչապատման 40% և ավելի պահանջը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

17. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հնդկաստանի փողոց հ.2 հասցեում բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ –1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հնդկաստանի փողոց հ.2 հասցեում բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

18. Աղբահանության վճարի նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ –1. Երևան քաղաքում 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված աղբահանության վճարը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետներում չվճարած ֆիզիկական (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը) և իրավաբանական անձանց, հիմնարկներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ազատել 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված աղբահանության վճարը Օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը ներառյալ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից:

2. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

19. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N266-Ն և 267-Ն որոշումների մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ –1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N 266-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Որոշման 5-րդ կետից հանել «(բացառությամբ վերգետնյա հարկի (հարկերի) ավելացում նախատեսող նախագծերի համաձայնեցման դեպքերի)» բառերը.

2) Որոշման 6-րդ կետից հետո լրացնել նոր 6.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա կամ Նուբարաշեն կամ Նոր Նորք վարչական շրջանի տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների 2025 թվականի ընթացքում մեկ անգամ և մինչև 6 ամիս ժամկետով երկարաձգման համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի

դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:»:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 267-Ն որոշման 1-ին կետի 13-րդ ենթակետից հետո լրացնել նոր 13.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«13.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում վերգետնյա հարկի (հարկերի) ավելացմամբ պայմանավորված փոփոխություններ կատարելու դեպքում՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է դրույքաչափի նվազեցման արտոնություն, այն սահմանելով՝ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես (շենքերի և շինությունների ստորգետնյա և վերգետնյա հարկերի արտաքին չափերի մակերեսների հանրագումար) ունեցող շենքերի և շինությունների համար (նվազեցվում է օրենսդրությամբ նախատեսված ավտոկայանատեղերի նվազագույն ծավալը ապահովված մակերեսից ավել մակերեսը)՝ 1000000 /մեկ միլիոն/ դրամի և 3001 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 1000000 /մեկ միլիոն/ դրամի հանրագումարի ու Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 265-Ն որոշման հավելվածի 14-րդ կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:»:

20. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N690-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ –1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու կարգը սահմանելու մասին» N 690-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 3-րդ կետում «կարող է սահմանվել հետևյալ քաղաքացիների խմբերի նկատմամբ» բառերը փոխարինել «կարող է սահմանվել քաղաքացիների և կազմակերպությունների հետևյալ խմբերի նկատմամբ» բառերով.

2) 3-րդ կետի 3-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

3) 3-րդ կետի 3-րդ ենթակետից հետո լրացնել նոր 4-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը անհատույց (մշտական) օգտագործող կազմակերպությունները՝ տվյալ անշարժ գույքի մասով, եթե համայնքային սեփականություն հանդիսացող անհատույց (մշտական) օգտագործման տրամադրված անշարժ գույքի տարածքում չի իրականացվում ձեռնարկատիրական գործունեություն:».

4) 9-րդ կետում «սույն կարգի 3-րդ կետի 1-ին, 2-րդ կամ 3-րդ ենթակետերով» բառերը փոխարինել «սույն կարգի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ ենթակետերով» բառերով.

5) 13-րդ կետի 1-ին ենթակետում «հարկ վճարողի գրանցման» բառերը փոխարինել «հարկ վճարողի գրանցման (կազմակերպության դեպքում՝ գտնվելու վայրի)» բառերով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 9, ձեռնպահ՝ 11

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2025 թվականի մարտի 18-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

21. Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Հայկ Գրիգորյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Արման Բաբաջանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
3. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Արաքսի Դիլանյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
5. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
6. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանը, քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար
2. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Հայկ Գրիգորյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
5. Քրիստինա Վարդանյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
6. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
7. Զարուհի Աղաջանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Հայկ Սահակյանը:

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը և Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանը:

Նիստը վերսկսվեց ժամը 11.40-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 27, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

22. Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանաի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Ռոբերտ Ծովյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Տիգրան Պետրոսյան – Երևանի ավագանու Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
4. Զարուհի Փոստանջյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Հայկ Միրզոյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
6. Լուսինե Սարգսյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետ Ալիկ Վարդազարյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց», «Մայր Հայաստան», «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունների անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկան «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը, «Մայր Հայաստան» անդամ Մեսրոպ Մանուկյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նուարդ Վարդանյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 14.15-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN 1-6 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 24, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

23. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբայկցության ղեկավար Վահան Ավագյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մանուկ Սուքիասյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբայկցության ղեկավար Վահան Ավագյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Որոշման 1-ին կետի 3.5-րդ ենթակետի «ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց,» բառերից հետո լրացնել «կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով,» բառերը.

2) Որոշման 1-ին կետի 4.5-րդ ենթակետի «ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց,» բառերից հետո լրացնել «կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով,» բառերը.

3) Որոշման 1-ին կետի 5.5-րդ ենթակետի «ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց,» բառերից հետո լրացնել «կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով,» բառերը.

4) Որոշման 1-ին կետի 6.5-րդ ենթակետի «ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց,» բառերից հետո լրացնել «կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով,» բառերը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 10-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

2025 թվականի մարտի 18-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված 24-րդ՝ «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցի վերաբերյալ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը հայտնեց՝ հաշվի առնելով, որ վերոնշյալ նախագիծը ևս վերաբերում է հանրային տրանսպորտին, որը մի քանի անգամ քննարկվել է Երևանի ավագանու նիստերի ընթացքում, այժմ արդիական չէ քննարկել այս ֆորմատով:

Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» խմբակցությունները չեն մասնակցի 2025 թվականի մարտի 18-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված 24-րդ՝ «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցի քննարկմանը:

Նիստին մասնակցում էր ավագանու 18 անդամ:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 18.09.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հայտարարվեց երեսուն րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվեց և նիստին ներկա էր ավագանու 4 անդամ՝ Վահան Ավագյանը, Վահե Եսայանը, Լուսինե Բուղայանը և Արամ Թորոսյանը:

Քվորում չկա:

2025 թվականի մարտի 18-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված 24-րդ՝ «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցի մասով նիստը համարվեց չկայացած:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը